

Կարծիք

Կարինե Արսուշի Մոսիկյանի

«Նեմեսիոս Եմեսացու փիլիսոփայական հայացքները և դրանց ազդեցությունը միջնադարյան հայ փիլիսոփայական մտքի զարգացման վրա»

Փիլիսոփայական գիտությունների (Ք.01.01) թեկնածուի գիտական աստիճանի հայցման ատենախոսության մասին

Բոլորիս հայտնի է, որ ատենախոսության հեղինակը, կարելի է ասել, հայերեն Նեմեսիոսի ուսումնասիրման հիմնարկողներից է: Այո, եղել է Տիրոյանի հրատարակությունը՝ վենետիկյան վեց ձեռագրի հիման վրա, և տեղեկատվական բնույթի մանր հոդվածներ, կա նաև Մորենո Մորանիի հունարեն բնագրի գիտաքննական հրատարակությունը, որի սրբագրման համար տեղ-տեղ օգտագործվել է վենետիկյան բնագիրը, բայց Մոսիկյան Կարինեն գիտական շրջանառության մեջ է դրել Նեմեսիոսի հայերեն թարգմանության քննական բնագիրը, համեմատելով Մատենադարանի ևս 13 գրչագիր և հաշվի առնելով հնագույն XI դարի երուսաղեմյան օրինակը, ընդորում, ինքնուրույն սովորելով հին հունարենն այնքանով, որ հնարավորություն է ունեցել համեմատել հունարեն ու հայերեն բնագրերը: Ով երբևիցե զբաղվել է նման գործով, գիտի, թե դա ինչպիսի տաժանակիր աշխատանք է, առավելևս, երբ խոսքը հունարեն դպրոցի թարգմանության մասին է (թեպետ, անշուշտ, Ստեփանոս Սյունեցու թարգմանություններն այն աստիճանի բառացի չեն, ինչպիսիք են ավելի վաղ V-VI դ. հունարեն բնագրերը): Ատենախոսը նաև փորձել է ուսումնասիրել «Յաղագս բնության մարդոյ» հայերեն բնագրի ազդեցությունը հետագա հայ մտավոր մշակույթի վրա, սկսելով ուսումնական մեկնություններից՝ լուծմունքներից, վերջացնելով XVII դարի հեղինակների մեջբերումներով:

Այս պատկառելի աղբյուրագիտական նյութն ինքնին գիտական մեծ արժեք ունի, սակայն արդեն Նեմեսիոսի բնագիրը պատրաստելիս, ատենախոսը ուշադրություն է դարձնում Նեմեսիոսի և նեմեսիոսական հայ ավանդույթի փիլիսոփայական հատկապես մարդաբանական և բնափիլիսոփայական կողմի վրա: Դրանք կազմում են ներկայացված աշխատության առանցքը և դրա նորույթը:

Ատենախոսության մեջ ներկայացված են Նեմեսիոսի հայացքները, նրա փիլիսոփայության մեջ անտիկ և քրիստոնեական տարրերի, բանապաշտության և հավատքի հարաբերությունները, նրա երկի ազդեցությունը թե ընդհանուր

քրիստոնեական, թե՛ հենց հայկական փիլիսոփայական մտքի վրա: Վերջինիս վրա ազդեցությունը, ինչպես ցույց է տալիս հեղինակը, իրոք էական է՝ թարգմանությունը զարկ է տվել սեփական մարդաբանական մտքի զարգացմանը, ինչպես և փոխանցման օղակ է հանդիսացել անտիկ բնափիլիսոփայական տեսությունների համար, նաև, «հունաբան» այլ թարգմանությունների նման, նպաստել է համապատասխան մասնագիտական լեզվի ձևավորման: Այդ թարգմանությունն առիթ և առարկա է եղել բազմատեսակ լուծմունքների (ինչը վկայում է մարդակազմության՝ վարդապետարաններում սերտվելու մասին) և հետք է թողել հայ մտածողների երկերում՝ թե՛ գաղափարների առնչության, և թե՛ բնագրային ընդհանրությունների ձևով:

Բարձր գնահատելով Կարինե Մոսիկյանի կատարած աշխատանքը, այնուամենայնիվ, պետք է նշենք մի քանի անստույգ կամ վիճելի պահեր: Առաջինը՝ Նեմեսիոսի էկլեկտիկ փիլիսոփա լինելու կամ չլինելու խնդիրն է: Հեղինակը, անշուշտ զգալով «էկլեկտիկ» բնութագրի անորոշությունը, փորձում է այն փոխարինել «հավաքաբան մտածող» բնորոշումով, սակայն ամբողջ խնդիրն այն է, որ տարբեր տեսակետներ միևնույն առարկայի մասին շարադրելն անտիկ կամ վաղ միջնադարյան մտածողին որևէ կերպ բնավ չի բնութագրում: Սա մեթոդ է, որը վկայված է դեռևս Արիստոտելի և նրա աշակերտների մոտ, որոնք գիտակցում էին, որ ցանկացած գաղափարի կամ խնդրի քննարկումը չի սկսվում մաքուր էջից՝ կա արդեն ձևավորված հասկացական դաշտ, և սեփական խոսքն ասելուց առաջ հարկավոր է այս դաշտում կողմնորոշվել, այն է՝ ծանոթանալ բոլոր «կարծիքների» հետ: Կարծիքը հունարեն δόξα է, իսկ մեթոդը կոչվում է դոքսոգրաֆիա: Այն կարելի է տեսնել և սկեպտիկոսների, և ճեմականների, և բժիշկների մոտ:

Երկրորդն այն շատ տարածված պատկերացումն է, որ քրիստոնեության առաջացումը մի տեսակ անջրպետ է ստեղծել միջնադարի և անտիկ մտավոր ժառանգության միջև, և միայն հատուկենտ հեղինակներ, ինչպիսին էր նաև Նեմեսիոսը, ինչ-ինչ տեղեկություններ են «փոխանցել» անտիկ փիլիսոփայությունից քրիստոնյա մտածողնրին: Անշուշտ, Նեմեսիոսին հաջողվեց կազմել մարդաբանության ձեռնարկ, այն էլ՝ քրիստոնեական հավատքին հարմարեցրած, և այդ պատճառով նրա գործն այդքան տարածում ստացավ: Բայց պետք է նաև գիտակցել, որ անտիկ գրավոր ժառանգության գերակշիռ մասը մեզ է հասել *միջնադարյան գրիչների* ջանքերով, և այդ գրքերի ընթերցման ավանդույթը, համենայնդեպս, Բյուզանդիայում, երբեք չի ընդհատվել: Դա նշաակում է, որ Նեմեսիոսի օգտագործած գաղափարներին (եթե խոսքը գուտ գաղափարների մասին է) միջնադարյան

(Հւր 90) восточно-христ. богословской мысли խորագրերում հապավումներ չեն անում

(Հւր 145) средновековый средневековый

(Հւր 148) clementio Vaticana Clementino Vaticana

(Հւր 151) Histoire comparee comparee

(Հւր 160) Thomson R.W. Armenian Version of the Works attributed to Dionysius the Areopagite.

Louvain, 1987, p. 258. պէտք է նշել մատենաշարը (CSCO՝ Corpus Scriptorum Christianorum Orientalium) և հատորը:

Սակայն արված դիտողությունները բնավ չեն նսեմացնում ներկայացված աստենախոսության արժանիքները: Այն աչքի է ընկնում կուռ կառուվածքով, տրամաբանված շարադրանքով և միանգամայն գիտական ոճով: Սեղմագիրը լիովին արտացոլում է աշխատության բովանդակությունը:

Կարծում եմ, որ աստենախոսությունը հաջողված է, իսկ հեղինակն արժանի է փիլիսոփայական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի:

Օլգա Վարդագարյան,
Փիլիսոփայական գիտությունների թեկնածու,
Մեքոպ Մաշտոցի անվան Մատենադարանի
ավագ գիտաշխատող

Մեքոպ Մաշտոցի անվան Մատենադարանի
ավագ գիտաշխատող, փ.գ.թ. Օլգա Վարդագարյանի ստորագրությունը հաստատում
եմ՝

Մեքոպ Մաշտոցի անվան Մատենադարանի
գիտական զճով փոխտնօրեն Վահե Թորոսյան

10.09.2023 թ.